ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

ՀՀ, 0015, ք. Երևան, Արգիշտիի 1

№ 978-Ա « 14 » օգոստոսի 2025թ.

ԱՎԱՐՏՎԱԾ ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ՕԲՅԵԿՏԸ ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ
ԸՆԴՈՒՆՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշման N 1 հավելվածով հաստատված կարգի 146-րդ կետի պահանջները՝ Երևան քաղաքի Նոր Նորքի 2-րդ զանգվածի Վերածննդի այգու բարեկարգման աշխատանքնե՝րը շահագործման ընդունելու նպատակով.

1. Ստեղծել հանձնաժողով, հետևյալ կազմով.

Ա. Խեչիկյան	- Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի շինարարության և բարեկարգման վարչության շինարարական օբյեկտների ծրագրի ղեկավար /հանձնաժողովի նախագահ/
Հ. Գյումրյան	- Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի շինարարության և բարեկարգման վարչության շինարարական օբյեկտների ծրագրի պատասխանատու ինժեներ
«ԵՐՎԱԴԱ» ՍՊԸ-ի տնօրեն Հ. Մխեյան	- Կապալառու
«ՄԻԿԱՆ» ՍՊԸ-ի տնօրեն Կ. Միքայելյան	- Տեխնիկական հսկողություն իրականացնող
«ԿԱՊԻՏԱԼ ՓՐՈՋԵՔԹ» ՍՊԸ-ի տնօրեն Ա. Հովհաննիսյան	- Հեղինակային հսկողություն իրականացնող
«ԵՐՔԱՂԼՈՒՅՍ» ՓԲԸ-ի գեղարվեստական լուսավորության, այգիների, անցումների տեղամասի պետ Հ.Գալուստյան	- Շահագործող կազմակերպություն

«ԿԱՆԱՉԱՊԱՏՈՒՄ ԵՎ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՊԱՀՊԱՆՈՒԹՅՈՒՆ» ՀՈԱԿ-ի ներկայացուցիչ Լ. Համբարձումյան	- Շահագործող կազմակերպություն

2. Հանձնաժողովին՝ ստուգել կատարված աշխատանքների համապատասխանությունը հաստատված նախագծին, նորմատիվատեխնիկական փաստաթղթերի պահանջներին ու ստանդարտներին և կազմել աշխատանքների հանձնման-ընդունման ակտը:

3. Սույն կարգադրության կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի շինարարության և բարեկարգման վարչության պետի վրա:

4. Սույն կարգադրության կատարման հսկողությունն իրականացնում է Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի քարտուղարը:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ, ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ ԱՐՄԵՆ ՓԱՄԲՈՒԽՉՅԱՆ

X

ԱՐՄԵՆ ՓԱՄԲՈՒԽՉՅԱՆ

Signed by: PAMBUKHCHYAN ARMEN 3611840246